Աշխատանքի ծածկագիր 1292

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ.Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 1-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 30-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 1

Բողոքաբերի փաստարկը հիմնավոր չէ, քանի որ օրինական ուժի մեջ մտած բառակապակցության բացակայությունը հարցի ընկալման վրա որևէ կերպ չի ազդում: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 4

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 420-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 5

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 420-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 7

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 392-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 10

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 353-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 11

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 431-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 12

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում, ճիշտ պատասխան է նաև դ/ կետում սահմանված պատասխանը այն հիմքով, որ հակառակ պարագայում կխախտվի իրավական որոշակիությունը և կստացվի, որ օտարերկրյա անձինք չեն կարող վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերել ՔԴՕ-ով սահմանված ժամկետներում: Առավել ևս, օրենսդիրը վերաքննիչ և բողոք բերելու առավել երկար ժամկետները պայմանավորել է միջազգային պայմանագրերով սահմանված դրույթներով: Այսինքն, օտարերկրյա անձինք կարող են վճռաբեկ և վերաքննիչ բողոք բերել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:

Հարց 23

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 222-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 24

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բ/ տարբերակն է, որ բխում է ՔԴՕ 86-րդ հոդվածի 1-ին մասի և 203 հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Հարց 25

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-

րդ կետի բացառվում է հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Հարց 30

Միավորը ենթակա չէ վերանայման, քանի որ ՔԴՕ 27-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա քննության ենթակա դատական ակտերի վերանայումը, որոնց թվում է նաև պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 1292 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 25-րդ, 12-րդ հարցերի պատասխանները գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ